ԳԵՎՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆ
Ակադեմիկոս, Հայաստանի Հանրապետության
Գիտությունների Ազգային Ակադեմիայի փոխպրեզիդենտ

ՀՈՒՅՍՈՎ ԵՎ ՀԱՎԱՏՈՎ

Ամենայն Հայոց 132-րդ Հայրապետ Գարեգին Բ-ի անունը լայնորեն հայտնի է հայ մտավորականների շրջանակներում: Հայտնի է նրա անձը, գործը, մտածելակերպը: Եվ բարի համբավը: Համբավ, որ ձեռք է բերվել իր ժողովրդի, Հայոց աշխարհի բարգավաճման և զորացման համար հետևողական ու արգասավոր գործունեության շնորհիվ: Այդ գործունեությունն է, որ հիմք տվեց Հայ Ազգային-Եկեղեցական սրբագումար ժողովին՝ ընտրել և հռչակել նրան Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Այդ պատմական որոշումը, թերևս, ոչ այնքան գնահատականն է կատարածի, որքան հույսը, հավատը կատարելիքի նկատմամբ: Որքան էլ արածը շատ լինի, շատ կհամարվի երեկվա տեսակետից և քիչ՝ վաղվա չափանիշների ու պահանջների տեսանկյունից:

Հավատում եմ, որ Ամենայն Հայոց նորընտիր Հայրապետը, այս կամ այն վճիռն ընդունելիս, իր գործունեության մեջ կհենվի անցյալի մեր նշանավոր Կաթողիկոսների փորձի վրա, կհամադրի մեր ժողովրդի համար բախտորոշ եզրահանգումները իր նախորդների հնարավոր կարծիքների հետ և կընդունի լավագույն ազգանպաստ որոշումներ:

Հավատում եմ, որ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն, ստանալով հայ ժողովրդի հովվի պատմական առաքելությունը, անմնացորդ կնվիրվի իր առջև ծառացած խնդիրների լավագույնս իրականացմանը:

Երիցս ցանկանում եմ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետին անսպառ ուժ ու կորով՝ ի նպաստ նորանկախ Հայաստանի Հանրապետության և աշխարհասփյուռ հայության: